



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

28 սեպտեմբերի, 2016 թ.

ք. Երևան

«Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխության

2016թ.-ի սեպտեմբերի 28-ին Բնֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրման 15-ամյակը և Տեղեկատվության ազատության միջազգային օրը նշանավորելու նպատակով արդեն 14-րդ անգամ Երևանում տեղի ունեցավ Բնֆորմացիայի ազատության կենտրոնի «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությունը: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Չարությունյանը, ով կարևորեց այս նախաձեռնությունը և շնորհավորեց մրցանակակիրներին: Ներկաներին ողջունեցին նաև Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության գործող ղեկավար Դիրք Լորենցը և ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյանը: Վերջինս նշեց. «Բնֆորմացիայի ազատության կենտրոնը «Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխության միջոցով ձևավորում ու ամրապնդում է հրապարակայնության ու թափանցիկության ավանդույթները Հայաստանի կառավարման համակարգում: Ոսկե բանալին և ժանգոտ կողպեքը դարձել են ազդեցիկ միջոցներ փակ և գաղտնի գործունեությունը հրապարակայնորեն քննադատելու, միաժամանակ բարձր գնահատելու պետական մարմինների բաց և թափանցիկ աշխատանքը»:

- Մրցանակաբաշխության դրական մրցանակը Ոսկե բանալին, շնորհվեց հետևյալ անձանց և կազմակերպություններին.
- ՀՀ առողջապահության նախարարությունը ճանաչվեց ամենաբաց գերատեսչություն, որը լավագույնս է կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը: ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին Ոսկե բանալի մրցանակը հանձնեց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության գործող ղեկավար Դիրք Լորենցը:
- «Բաց կառավարման գործընկերություն» միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանյան գործողությունների ծրագրի հանձնառությունների լավագույն իրականացման համար Ոսկե բանալի մրցանակ տրվեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Չարությունյանին: Մրցանակը շնորհեց ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան ղեկավար Դեբորա Գրիսերը:
- ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը <http://vdzor.mtad.am/>, ճանաչվեց տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք: Ոսկե բանալի մրցանակը Վայոց Ձորի փոխմարզպետ Մելս Չարությունյանին հանձնեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկին Ջուդիթ Սարգսյանը Ֆարնուրթյանը:
- Տեղեկություն ստանալու իրավունքն ամենակտիվ և լավագույնս օգտագործող հասարակական կազմակերպություն ճանաչվեց «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը: ՀԿ-ի նախագահ Հայկունի Հարությունյանին մրցանակը հանձնեց ՀՀ արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմույանը:
- «Տեղեկատվության ազատության մասին» օրենքն ամենակտիվ օգտագործող լրագրող ճանաչվեց Սիլվիյեթի լրագրող Արման Մուլեյանյանը: Ոսկե բանալի մրցանակը հանձնեց Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ Լորենտա Վիդոյան:
- Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները հետևողական լուսաբանած լրատվամիջոց ճանաչվեց «Ասպարեզ» օրաթերթը:
- ԻԱԿ-ի 15-ամյակի հոբելյանական Հատուկ մրցանակը շնորհվեց ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանին:

Հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ ԻԱԿ-ը որոշեց մրցանակաբաշխության բացասական մրցանակ ժանգոտ կողպեքի մրցանակակիր մարմիններին չհայտարարել: Փոխարենը ՏԱ տեսակետներից փակ գործող մարմինները կընդգրկվեն Կենտրոնի Էռամայակային և տարեվերջյան սև ցուցակներում:

«Գոտուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում հզորացվել են ՔՀԿ-ների և ՋԱԼ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, որի նպատակով ՀՀ մարզերում 105 ՔՀԿ-ների և ՋԱԼ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են փոքր ենթադրամաշնորհներ 15 ՔՀԿ-ների և ՋԱԼ-ների: Ծրագրի շրջանակներում 2014 թ. ստեղծվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ՔՀԿ-ներից: Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսության մեջ: Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և վերոնշյալ կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման շուրջ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Բնֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Բնֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Լիանա Դոյդոյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00: հեռ.՝ 560360: URL՝ <http://www.foi.am>: Կատարող՝

Լիանա Դոյդոյան, էլ. փոստ՝ foi@foi.am:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95



Եվրասիանաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոտ-հառու, ռետրոսերեն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրներին ու ժողովուրդներին հետ:



Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, քմ. 2
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Բնֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռապատճեն՝ +37410 56 03 60